ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ

0010 ք. Երևան, Կառավարական տուն 1

№ 02/05.1/32042-2023

ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ-ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ
ԴԱՎԻԹ ԱՌԱՔԵԼՅԱՆԻՆ

Հարգելի՛ պարոն Առաքելյան,

Համաձայն «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 66-րդ և 77-րդ հոդվածների՝ Ձեզ ենք ներկայացնում՝

1) «Հայաստանի Հանրապետության քաղաքացիության մասին» օրենքում փոփոխություն և լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի (Պ-654-22.08.2023-ՊԻ-011/0) վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կառավարության առաջարկությանը,

2) Հայաստանի Հանրապետության վարչապետի 2023 թվականի սեպտեմբերի 14-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցիչ (հարակից զեկուցող) նշանակելու մասին» N 941 - Ա որոշումը:

Հարգանքով՝

ԱՐԱՅԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Կատարող՝ Պետրոս Քացախյան
Ազգային ժողովի հետ կապերի վարչության խորհրդական՝ կառուցվածքային ստորաբաժանումներում առանձին գործառույթներ համակարգող
Հեռ. 010515686
Էլ փոստ՝ petros.qatsakhyan@gov.am

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (Պ-654-22.08.2023-ՊԻ-011/0) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆԸ

«Հայաստանի Հանրապետության քաղաքացիության մասին» օրենքի (այսուհետ՝ օրենք) 13-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ առանց նույն հոդվածի առաջին մասի 1-ին և 2-րդ կետերով սահմանված պահանջների պահպանման՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն կարող է ստանալ Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն չունեցող այն անձը, որի ծնողները կամ նրանցից մեկը նախկինում ունեցել է Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն կամ ծնվել է Հայաստանի Հանրապետությունում, և որը 18 տարին լրանալուց հետո՝ 3 տարվա ընթացքում, դիմել է Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ստանալու համար:

Քաղաքացիությունն անձի և պետության միջև կայուն իրավական կապն է, որը հիմնականում չի պայմանավորվում քաղաքացիություն հայցող անձի ծնողի՝ տվյալ պետությունում ծնված լինելու փաստով և չի հանդիսանում այդ երկրի քաղաքացիություն ձեռք բերելու հիմք:

Քաղաքացիության ձեռքբերման համընդհանուր ընդունված սկզբունքներից հողի իրավունքով Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ձեռք բերելն օրենքի տրամաբանության մեջ կիրառվում է միայն ապաքաղաքացիության կանխարգելման նպատակով «Քաղաքացիություն չունեցող անձանց մասին» 28.09.1954 թ. և «Ապաքաղաքացիության կրճատման մասին» 30.08.1961 թ. կոնվենցիաների համատեքստում՝ երեխաների կողմից Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ձեռք բերելիս:

Հետևաբար, գտնում ենք, որ օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետից անհրաժեշտ է հանել «կամ ծնվել է Հայաստանի Հանրապետությունում» բառերը, քանի որ դրույթը ենթադրում է հողի իրավունքի կիրառում՝ առանց ապաքաղաքացիության կանխարգելման նպատակի: Ուստի առաջարկում ենք «Հայաստանի Հանրապետության քաղաքացիության մասին» օրենքում փոփոխություն և լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի (այսուհետ՝ նախագիծ) 1-ին հոդվածի 2-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«2) 13-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետում «կամ ծնվել է Հայաստանի Հանրապետությունում, և որը 18 տարին լրանալուց հետո՝ 3 տարվա ընթացքում, դիմել է Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ստանալու համար» բառերը փոխարինել «և որն օրենքով սահմանված կարգով վերջին մեկ տարին մշտապես բնակվել է Հայաստանի Հանրապետությունում» բառերով:

Նշվածի հաշվառմամբ հայտնում ենք նաև, որ օրենքով սահմանված նորմով ծնողի՝

Հայաստանի Հանրապետության քաղաքացի հանդիսանալը կամ նախկինում Հայաստանի Հանրապետության քաղաքացի հանդիսացած լինելը սահմանվում է որպես հիմք զավակի՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ձեռք բերելու համար, իսկ առաջարկվող փոփոխությունը՝ վերջին մեկ տարին մշտապես բնակվելու հիմքի նախատեսումը, ենթադրում է պետության հետ որոշակի կապի ապահովում:

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 13-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն, եթե օրենսդրական ակտով (բացառությամբ Սահմանադրության) սահմանված նորմը կարող է կատարվել միայն այդ ակտով նախատեսված ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտի ընդունմամբ կամ դրա կատարումն ուղղակիորեն պայմանավորված է ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտի ընդունմամբ, ապա օրենսդրական ակտի անցումային դրույթներով սահմանվում է նաև ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտի ընդունման նախատեսվող ժամկետը:

Նախագծի ընդունմամբ անհրաժեշտություն կառաջանա եռամսյա ժամկետում կատարել համապատասխան փոփոխություն (փոփոխություններ) և (կամ) լրացում (լրացումներ) Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի նոյեմբերի 23-ի «Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ստանալու և Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունը դադարեցնելու համար անհրաժեշտ փաստաթղթերի ցանկը, դրանք ներկայացնելու, քննարկելու կարգը և ժամկետները, ինչպես նաև ազգությամբ հայ լինելը հաստատող մկրտության մասին փաստաթուղթ տրամադրող եկեղեցական կառույցների ցանկը հաստատելու մասին» N 1390-Ն որոշման մեջ:

Միաժամանակ, անդրադառնալով նախագծի հիմնավորմանը, հարկ ենք համարում նշել, որ Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ստանալու համար օրենքով նախատեսվող վավերապայմանները չեն կարող դիտարկվել որպես խտրականության դրսևորում Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ձեռք բերելու համար, քանի որ օրենսդիրը լեգիտիմ նպատակ է հետապնդում Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ձեռք բերելու համար վավերապայմաններ սահմանելիս:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

N 941 - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ (ՀԱՐԱԿԻՑ ԶԵԿՈՒՑՈՂ)
ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 66-րդ հոդվածի 2-րդ մասը՝

Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության Միգրացիայի և քաղաքացիության ծառայության պետ Արմեն Ղազարյանին նշանակել Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում «Հայաստանի Հանրապետության քաղաքացիության մասին» օրենքում փոփոխություն և լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծը (*Պ-654-22.08.2023-ՊԻ-011/0*) քննարկելիս Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցիչ (հարակից զեկուցող):

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան

14.09.2023

ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ

ՆԱԽԱԳԻԾ

Պ-654-22.08.2023-ՊԻ-011/0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

Հոդված 1. «Հայաստանի Հանրապետության քաղաքացիության մասին» 1995 թվականի նոյեմբերի 6-ի Ն-061-Ի օրենքի (այսուհետ՝ Օրենք)՝

1) 13-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետը «զավակ» բառից հետո լրացնել «կամ ծնող» բառերով:

2) 13-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետում «եւ որը» բառերից հետո «18 տարին լրանալուց հետո՝ 3 տարվա ընթացքում, դիմել է Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ստանալու համար» բառերը փոխարինել «օրենքով սահմանված կարգով վերջին մեկ տարին մշտապես բնակվել է Հայաստանի Հանրապետությունում.» բառերով:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող տասներորդ օրը:

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ
«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ

1. Ընթացիկ իրավիճակը եւ իրավական ակտի ընդունման անհրաժեշտությունը

Գործող Օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն. Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն կարող է ստանալ Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն չունեցող այն անձը՝ 1) որը մինչեւ Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ստանալու դիմումը ներկայացնելու պահը վերջին երկու տարվա ընթացքում օրենքով սահմանված կարգով գրանցված ամուսնության մեջ է գտնվել Հայաստանի Հանրապետության քաղաքացու հետ եւ այդ երկու տարվա ընթացքում առնվազն 365 օր օրինական հիմքերի առկայությամբ բնակվել է Հայաստանի Հանրապետությունում կամ ունի Հայաստանի Հանրապետության քաղաքացի զավակ.

2) որի ծնողները կամ նրանցից մեկը նախկինում ունեցել է Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն կամ ծնվել է Հայաստանի Հանրապետությունում, եւ որը 18 տարին լրանալուց հետո՝ 3 տարվա ընթացքում, դիմել է Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ստանալու համար:

Այն տրամաբանությունը, որ եթե ծնողը կարող է իր երեխայի՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ունենալու հիմքով նախաձեռնել Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ձեռք բերելու գործընթաց, ապա օբյեկտիվ իրականությունում այս գործընթացը պետք է հնարավոր լինի կյանքի կոչել նաեւ հակառակ պարագայում: Առաջարկվում է՝ որպես նույն իրավական ճանապարհով քաղաքացիություն ձեռք բերելու գործընթաց կարողանա նախաձեռնել նաեւ չափահաս զավակը՝ ծնողներից մեկի Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ունենալու հիմքով:

Նախագծով առաջարկվում է, որ զավակից զատ քաղաքացիություն ստանալու դիմում ներկայացնելու հիմք հանդիսանա ի թիվս այլնի այն, որ դիմողի առնվազն ծնողներից մեկը կա՛մ հանդիսանում է, կա՛մ էլ նախկինում հանդիսացել է Հայաստանի Հանրապետության քաղաքացի:

Գործող օրենքով խնդիր է առաջանում, երբ 18 տարին լրացած անձը երեք տարվա ընթացքում չի դիմում քաղաքացիություն ստանալու համար (մինչեւ 21 տարեկանը), իսկ նախագծի համաձայն՝

անձը, ըստ էության, 1 տարի բնակվելով ՀՀ-ում այլեւս ժամանակային վերոնշյալ սահմանափակման խնդիրը չի ունենում:

Այս ամենը, ի թիվս այլնի, միտված է նաեւ որոշակի առումով «թեթեւացնելու» Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ունեցած կամ ունեցող՝ ազգությամբ ոչ հայերի զավակների կողմից ավելի մատչելի ու հեշտ ժամկետներում քաղաքացիություն շնորհելու դիմում ներկայացնելը:

Նախագծի ներկայացման առիթներից մեկն էլ աշխարհաքաղաքական լրջագույն գործընթացներն են, որոնց պարագայում առաջացել է անհրաժեշտություն՝ հնարավորինս մատչելի ճանապարհով Հայաստանի Հանրապետության քաղաքացիների զավակներին շնորհել Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն եւ առնել պետության հովանու ներքո:

2. Առաջարկվող կարգավորման բնույթը եւ նպատակը

«Հայաստանի Հանրապետության քաղաքացիության մասին» օրենքում փոփոխություն եւ լրացում կատարելու մասին» օրենքի նախագծով առաջարկվում է «Հայաստանի Հանրապետության քաղաքացիության մասին» օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետը «զավակ» բառից հետո լրացնել «կամ ծնող» բառերով եւ «Հայաստանի Հանրապետության քաղաքացիության մասին» օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետը շարադրել հետեւյալ խմբագրությամբ՝ «որի ծնողները կամ նրանցից մեկը նախկինում ունեցել է Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն կամ ծնվել է Հայաստանի Հանրապետությունում, եւ որը օրենքով սահմանված կարգով վերջին մեկ տարում մշտապես բնակվել է Հայաստանի Հանրապետությունում.»:

3. Նախագծի մշակման գործընթացում ներգրավված ինստիտուտները, անձինք

ՀՀ ԱԺ պատգամավոր Ռուստամ Բաքոյան, ՀՀ վարչապետի աշխատակազմի ներկայացուցիչ, ՀՀ Ազգային անվտանգության ծառայության ներկայացուցիչներ, ՀՀ ՆԳՆ ոստիկանության, ՀՀ ՆԳՆ Միգրացիոն ծառայության ներկայացուցիչներ եւ Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի ներկայացուցիչ:

4. Իրավական ակտի կիրառման արդյունքում ակնկալվող արդյունքը

Ելնելով ՀՀ Սահմանադրության 29-րդ հոդվածից, ըստ որի՝ խտրականությունը, կախված սեռից, ռասայից, մաշկի գույնից, էթնիկ կամ սոցիալական ծագումից, գենետիկական հատկանիշներից, լեզվից, կրոնից, աշխարհայացքից, քաղաքական կամ այլ հայացքներից, ազգային փոքրամասնությանը պատկանելությունից, գույքային վիճակից, ծնունդից, հաշմանդամությունից, տարիքից կամ անձնական կամ սոցիալական բնույթի այլ հանգամանքներից, արգելվում է, օրենքի նախագիծը, ըստ էության, ենթադրում է խտրականության ու ընտրողական վերաբերմունքի բացառում ազգային փոքրամասնությունների նկատմամբ: Ներկայացվող փոփոխությունները հնարավորություն կտան Հայաստանի Հանրապետության իրավասու մարմիններին առավել դյուրին եւ լիարժեք կազմակերպելու ՀՀ քաղաքացիություն չունեցող անձանց՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն շնորհելու գործընթացը:

Բացի այդ, Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ստացող անձինք ներկայացվող փոփոխությամբ հնարավորություն կստանան առավել ակտիվ մասնակցություն ունենալ Հայաստանի Հանրապետության քաղաքական, տնտեսական, մշակութային, հասարակական կյանքում՝ գրանցելով եւ ներդնելով ավանդ իրենց աշխատանքային ու մասնագիտական գործունեությամբ՝ ի շահ Հայաստանի Հանրապետության: